ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան « 09 » հոկտեմբերի 2023թ № 1933-Ա

ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 4-րդ և 21-րդ ենթակետերով՝

հրամայում եմ.

Հաստատել ձեռներեցության զարգացման ռազմավարության համատեքստում Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության համակարգի զարգացման հայեցակարգային մոտեցումները՝ համաձայն հավելվածի:

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

X

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի
հոկտեմբերի 9-ի N 1933-Ա հրամանի

ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՆԱԽԱԲԱՆ 2
II. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 4
III. ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ 4
IV. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԵՆԱՍՅՈՒՆՆԵՐԸ 9
Գործընթացների թվայնացում 9
Օրենսդրական բարեփոխումներ 11
Ինստիտուցիոնալ բարեփոխումներ 11
Իրավագիտակցության բարձրացում 13

I. ՆԱԽԱԲԱՆ

1. Մտավոր սեփականությունը (ՄՍ) և ՄՍ իրավունքներն իրենց բոլոր տեսակներով կամ օբյեկտներով, ինչպիսիք են օրինակ՝ գյուտը, ապրանքային նշանը, հեղինակային և հարակից իրավունքը, արդյունաբերական դիզայնը, առևտրային գաղտնիքը և այլն, գիտելիքահենք տնտեսության զարգացման անկյունաքարն են:[1]

2. Նոր տեխնոլոգիական հեղափոխության ներկա ժամանակաշրջանում համաշխարհային տնտեսությունն անցում է կատարում հետարդյունաբերական և գիտելիքի վրա հիմնված տնտեսական քաղաքականության:

3. Զարգացած երկրների տնտեսության աճի գլխավոր նախապայմանը գիտելիքն է, ու բարձր տեխնոլոգիական արտադրությունը: Գիտելիքը կարևոր գործոն է տնտեսության արտադրողականության, մրցունակության և աճի համար: Գիտելիքը կրող մարդկային կապիտալը նորագույն տեխնոլոգիաների ստեղծման, բարձր արտադրողականությամբ արտադրության, արդյունաբերության, ծառայությունների ոլորտների զարգացման գլխավոր գործոնն է:

4. Մտավոր սեփականությունը բազմաթիվ ընկերությունների համար շատ մեծ շահույթ և արժեք գեներացնող գործիք է, որն օգնում է հաջողությունների հասնել մրցակցային շուկաներում:[2]

5. Ինչպես օրինակ՝ ԱՄՆ-ի ՀՆԱ-ի 34%-ը, որը կազմում է մոտ 5 տրիլիոն ԱՄՆ դոլար, ապահովում են բոլոր այն ոլորտները միասին, որտեղ ՄՍ-ն ունի կարևոր տնտեսական նշանակություն: Նմանատիպ հետազոտություն կատարվել է նաև Եվրամիության համար, համաձայն որի ՄՍ ոլորտի (ՄՍ օգտագործումից շահույթ ստացող) ընկերությունները 2008-2010 թվականների ընթացքում ապահովել են Եվրամիության ընդհանուր աշխատատեղերի 26%-ը, որի 21%-ը միայն ապահովել են ապրանքային նշանների ոլորտի

---

[1] Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը և իրավունքների կիրարկումը Հայաստանի Հանրապետությունում, IPRC/BEY (2020թ.)

[2] OECD/EUIPO (2016), Trade in Counterfeit and Pirated Goods: Mapping the Economic Impact, OECD Publishing, Paris. Available at: http://dx.doi.org/10.1787/9789264252653-en.

(այսինքն՝ դրանց շնորհիվ կամ օգտագործման արդյունքում շահույթ գեներացնող) ընկերությունները:[3]

6. Եվրամիությունում տնտեսության բոլոր ոլորտների մոտ 50%-ը ՄՍ ոլորտի ընկերություններ են, այսինքն՝ ընկերություններ, որոնց հիմնական եկամուտը գոյանում է ՄՍ ստեղծումից և օգտագործումից:

7. Դեպի գիտելիքի վրա հիմնված տնտեսություն անցման գործընթացներից անմասն չեն նաև անցումային տնտեսություն ունեցող երկրներն, ինչպես Հայաստանի Հանրապետությունը:

8. Հայաստանի Հանրապետության կառավարությունը որդեգրել է գիտելիքահենք և նորարարական տնտեսություն ձևավորելու տեսլականը և գիտելիքն ու նորարարությունը հռչակել տնտեսական զարգացման հիմնական շարժիչ ուժ, ինչն ամրագրել է 2021-2026 թվականների իր հնգամյա ծրագրով[4]:

9. ՄՍ-ն նորարարության վրա հիմնված տնտեսական զարգացման ապահովման առանցքային ուղղություն է: ՄՍ պահպանությունը խթանում է հետազոտությունների և զարգացումների (R&D) ինստիտուտի ներդրումն ու զարգացումը, գիտելիքի տեղափոխումը լաբորատորիայից արտադրություն, արտադրությունից՝ շուկա:

10. Գիտելիքահենք տնտեսության զարգացումը ի թիվս այլ գործոնների կախված է գիտելիքահենք ոլորտների զարգացվածության և հզորության մակարդակից: Որպես կանոն, գիտելիքահենք տնտեսությունում հատկապես կարևորվում են ստեղծարար ոլորտները՝ ստեղծարար արդյունաբերությունը (Creative Industries), ինչպես նաև գիտությունը, տեխնոլոգիաները, ճարտարագիտությունը, արդյունաբերական ոլորտները:

11. Նշված բոլոր ոլորտների գործունեության հիմքում ստեղծարար մարդու մտավոր գործունեությունն է, որի արդյունքների առևտրայնացումը նպաստում է գիտելիքահենք

---

[3] Office for Harmonisation in the Internal Market, the European patent Office (2013), Intellectual property rights intensive industries: contribution to economic performance and employment in the European Union. Available at: https://oami.europa.eu/ohimportal/en/web/observatory/ip-contribution).

[4] https://www.gov.am/files/docs/4586.pdf

տնտեսության զարգացմանը: Իսկ ստեղծարար մարդկանց մտավոր գործունեության արդյունքների գերակշռող մասը մտավոր սեփականություն է:

12. Որպես գիտելիքահենք տնտեսության զարգացման կարևոր հենասյուն ՄՍ համակարգը սխալ է դիտարկել միայն որպես իրավունքի առանձին ճյուղ:

II. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

13. Հիմնական նպատակն է նպաստել Հայաստանի Հանրապետությունում ՄՍ պահպանության ինստիտուցիոնալ համակարգի արդիականացմանը և հասարակայնության լայն շրջանակի իրավագիտակցության բարձրացմանը:

14. Նպատակից բխող հիմնական խնդիրներն են՝

1) ՄՍ համակարգի լիարժեք և բովանդակային թվայնացումը,
2) Օրենսդրության կատարելագործումը,
3) Վեճերի արտադատական համակարգի ներդրումը և զարգացումը,
4) Տեխնոլոգիաների առևտրայնացման խրախուսումը,
5) Կրթության և ուսուցման միջոցով ՄՍ պահպանության վերաբերյալ իրավունքների և պաշտպանության մեխանիզմների մասին տեղեկացվածության ապահովումը,
6) Հանրային իրազեկման շարունակական և նպատակային միջոցառումների իրականացումը,
7) ՄՍ պաշտպանության համակարգերի ներկայացուցիչների ներգրավվածության ակտիվացումը,
8) ՄՍ պահպանության և պաշտպանության համագործակցության խթանումը, մարդկային ռեսուրսի կարողությունների շարունակական զարգացումը:

III. ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

15. Հայաստանի Հանրապետությունում ՄՍ համակարգը տարիների ընթացքում անցել է զարգացման տարբեր շրջափուլեր: Հայաստանի Հանրապետության իրավական դաշտն, ընդհանուր առմամբ, ապահովում է բավարար երաշխիքներ ՄՍ պահպանության և պաշտպանության համար: Այն համապատասխանում է նաև միջազգային

չափանիշներին: ՄՍ օբյեկտների, ներառյալ՝ արտոնագրերի, ապրանքանիշերի, արդյունաբերական դիզայնի և հեղինակային իրավունքի պաշտպանությանն ուղղված օրենսդրական կարգավորումներ են սահմանված մի շարք օրենքներում: Քաղաքացիական օրենսգրքի 10-րդ բաժնից բացի, իրավական երաշխիքներ են ներառված ««Ապրանքային նշանների մասին», «Աշխարհագրական նշումների մասին», «Արտոնագրերի մասին», «Արդյունաբերական դիզայնի մասին», «Ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պաշտպանության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքներում: Բացի այդ, Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է տարբեր միջազգային պայմանագրեր, այդ թվում՝ «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» Փարիզի կոնվենցիան, «Արտոնագրային համագործակցության մասին» պայմանագիրը, Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության «Հեղինակային իրավունքի» պայմանագիրը և այլն: Հայաստանի Հանրապետությունը լինելով Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) անդամ՝ ունի համակարգային և արդյունավետ համագործակցություն վերջինիս հետ:

16. Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունը բախվում է մի շարք մարտահրավերների ՄՍ պաշտպանության ոլորտում: Մասնավորապես, ՄՍ իրավունքների վերաբերյալ հասարակության և գործարար համայնքի ցածր իրազեկվածությունը, ինչի արդյունքում Հայաստանի Հանրապետությունում գործող մասնավոր ընկերությունների կողմից խախտվում են ՄՍ իրավունքները:

17. Մեկ այլ մարտահրավեր է մարդկային և նյութական ռեսուրսի օգտագործումն այն հիմնավորմամբ, որ դեռևս լիարժեք թվայնացված չէ ՄՍ գրանցման, փորձաքննության և պահպանման ողջ գործընթացը:

18. Հայաստանի Հանրապետությունում ՄՍ պահպանության ազգային կառույցը Էկոնոմիկայի նախարարության ենթակայությամբ գործող Մտավոր սեփականության գրասենյակն է (այսուհետ՝ Գրասենյակ): Այն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հայտերի ընդունումն ու

փորձաքննության անցկացումը, արտոնագրերի կամ հեղինակային իրավունքի պետական գրանցումը, արտոնագրերի և վկայագրերի հանձնումն ու սահմանված կարգով նշված օբյեկտների պետական գրանցամատյանների վարումը, ինչպես նաև դրանց օգտագործման իրավունքի ընձեռման՝ ֆրանչայզինգի, լիցենզային պայմանագրերի, այդ թվում՝ բաց լիցենզիաների և իրավունքների փոխանցման գրանցումը: ՄՍ հիմնական օբյեկտ են հանդիսանում՝

1) գյուտը,
2) արդյունաբերական դիզայնը,
3) ապրանքային և սպասարկման նշանը,
4) աշխարհագրական նմուշը,
5) ապրանքների ծագման տեղանունների և ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիան:

19. **Համաձայն Գրասենյակի կողմից հրապարակված վիճակագրության,** 2022թ. էականորեն ավելացել են էլեկտրոնային տարբերակով ներկայացվող արդյունաբերական սեփականության օբյեկտների գրանցման հայտերի քանակը: Շարունակում է իրականացվել ՄՍ օբյեկտների գրանցման հայտերի և դրանց ամբողջ գործավարությանը վերաբերող փաստաթղթերի թվայնացումը:

20. **<u>Գյուտերի ուղղությամբ:</u>** 2022թ. Գրասենյակ է ներկայացվել 34 գյուտի արտոնագիր ստանալու հայտ, 84 գյուտի կարճաժամկետ արտոնագիր ստանալու հայտ, որոնցից 101-ը՝ ազգային, 17-ը՝ օտարերկրյա հայտատուներից: Հաշվետու ժամանակաշրջանում էլեկտրոնային եղանակով ներկայացվել է 32 հայտ (հայտերի ընդհանուր քանակի 27,11%-ը): 2022թ. տվյալների համաձայն Հայաստանի Հանրապետության 3451 գյուտի արտոնագրերից Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են 12–ը, իսկ գյուտի 781 կարճաժամկետ արտոնագրերից՝ 211-ը:

Աղյուսակ 1.[5] Գյուտերի հայտեր

Հայտատու	Հայտերի քանակը	Հայտերի ընդհանուր թվի մեջ %ային հարաբերակցությունը
Ֆիզիկական անձ	61	51,69
Իրավաբանական անձ	57	48,31
Ընդամենը	118	100

21. **Արդյունաբերական դիզայնի ուղղությամբ:** 2022թ. ավելացել է Գրասենյակ ներկայացված արդյունաբերական դիզայնի հայտերի քանակը: Ազգային ընթացակարգով ստացվել է 46 հայտ (2021թ.՝ 37 հայտ): Հայտերից 44-ը ստացվել են ազգային հայտատուներից, ինչը 12-ով ավել է նախորդ տարվա համեմատ (2021թ.՝ 32 հայտ), իսկ 2-ը՝ օտարերկրյա հայտատուներից: Հաշվետու ժամանակաշրջանում էլեկտրոնային եղանակով ներկայացվել է արդյունաբերական դիզայնի 13 հայտ (2021թ.՝ 15 հայտ), ինչը կազմել է հայտերի ընդհանուր թվի 28,26%-ը: 2022թ. ընթացքում գրանցվել է 27 արդյունաբերական դիզայն, որոնց տրվել են արդյունաբերական դիզայնի արտոնագրեր, ընդ որում, օտարերկրյա հայտատուներին տրվել է 2 արդյունաբերական դիզայնի արտոնագիր:

Աղյուսակ 2. Արդյունաբերական դիզայնի հայտեր

Հայտատու	Հայտերի քանակը	Հայտերի ընդհանուր թվի մեջ %ային հարաբերակցությունը
Ֆիզիկական անձ	20	43,48
Իրավաբանական անձ	26	56,52
Ընդամենը	46	100

22. **Ապրանքային նշանի ուղղությամբ:** 2022թ. աճել է Գրասենյակ ներկայացված ապրանքային նշանների գրանցման հայտերի քանակը: Ազգային ընթացակարգով գրանցման է ներկայացվել 3143 հայտ, ինչը մոտ 9%-ով ավել է նախորդ տարվա համեմատ (2021թ.՝ 2887 հայտ): Հայտերից 2537-ը ներկայացվել է ազգային հայտատուների կողմից:

[5] Այստեղ և հետայսու աղյուսակներում ներկայացվում է 2022թ. ֆիզիկական և իրավաբանական անձանցից ստացված հայտերի հարաբերակցությունը:

Ապրանքային նշանների թվով 3109 հայտով կատարվել է նախնական փորձաքննություն, գրանցվել է 1898 ապրանքային նշան, որոնցից 1202-ը՝ ազգային հայտատուների անունով: Նախորդ տարվա համեմատ գրանցված ապրանքային նշանների քանակն նվազել է ընդամենը 8%-ով (2021թ.՝ 2068 հայտ), 35%-ով աճել է ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումների թիվը (324 մերժում՝ նախորդ տարվա 240-ի փոխարեն), հետ կանչված է համարվել 34 հայտ: 2022թ. ընթացքում պատրաստվել և իրավատերերին է հանձնվել 2309 ապրանքային նշանի վկայագիր: Միջազգային ընթացակարգով (Մադրիդյան համակարգ) Հայաստանի Հանրապետություն նշմամբ ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 2773 ծանուցում (2021թ.՝ 2765 ծանուցում): Միջազգային ծանուցումներով կայացվել է ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրելու վերաբերյալ 1775 որոշում, նախնական մերժման մասին կայացվել է 929, իսկ վերջնական մերժման մասին՝ 729 որոշում: Հաշվետու ժամանակաշրջանում 11%-ով աճել է նաև էլեկտրոնային եղանակով ներկայացված հայտերի քանակը (1440 հայտ) նախորդ տարվա համեմատ (2021թ.՝ 1296 հայտ): 2022թ. ընթացքում ներկայացվել է հայտարկված ապրանքային նշանի գրանցման դեմ 88 գրավոր առարկություններ և դիտողություններ, ինչը 11%-ով պակաս է նախորդ տարվա համեմատ (2021թ.՝ 99 առարկություն): Հաշվետու ժամանակաշրջանում գրանցվել է 738 ապրանքային նշանների գործողության ժամկետների երկարաձգման և արդյունաբերական դիզայնի գրանցումից բխող 24 դիմում իրավունքների պահպանության ժամկետների երկարաձգման մասին: Ապրանքային նշանների պետական գրանցամատյանում կատարվել է 812 փոփոխություն և այլ գործողություններ:

23. **<u>Իրավունքների փոխանցման և լիցենզային պայմանագրերի գրանցման ուղղությամբ</u>:** Հաշվետու ժամանակաշրջանում քննարկվել և գրանցվել են 153 ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների փոխանցումը գրանցելու, 39 ապրանքային նշանների լիցենզիաները գրանցելու, 2 ապրանքային նշանի ենթալիցենզիայի, 2 ապրանքային նշանի ենթալիցենզիայի փոփոխությունը գրանցելու, 5 ապրանքային նշանների լիցենզիաների փոփոխությունը գրանցելու, ապրանքային

նշանների 2 լիցենզիաները չեղյալ հայտարարելու մասին, ապրանքային նշանների 1 ենթալիցենզիա չեղյալ հայտարարելու մասին, ապրանքային նշանի 2 ֆրանչայզինգի պայմանագրի, ինչպես նաև 3 արտոնագրի ոչ բացառիկ լիցենզիա տալու, 1 արտոնագրի իրավունքի փոխանցման մասին դիմումներ, 1 արդյունաբերական դիզայնի լիցենզիա:

IV. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԵՆԱՍՅՈՒՆՆԵՐԸ

24. Ներկա համաշխարհային և տեղական մարտահրավերներին ընդառաջ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության հիմնական ուղենիշներն, անհրաժեշտ է կատարելագործել ՄՍ ինստիտուցիոնալ հիմքերը, սահմանել համակարգի զարգացման այնպիսի հենասյուններ, որոնք կապահովեն անցումը դեպի մրցունակ և գիտելիքահենք տնտեսություն:

25. Հայաստանի Հանրապետության ՄՍ համակարգի զարգացման հիմնական հենասյուններն են՝

1) Գործընթացների թվայնացում,
2) Օրենսդրական բարեփոխումներ,
3) Ինստիտուցիոնալ բարեփոխումներ,
4) Իրավագիտակցության բարձրացում:

Գործընթացների թվայնացում

26. Գրասենյակի կողմից իրականացվող ծառայությունների ողջ գործընթացի, այդ թվում՝ բովանդակության թվայնացումը միտված է ՄՍ սուբյեկտների շահերի պաշտպանությանը: Այն լայն հնարավորություններ է տալիս ոչ միայն տեղացի, այլև օտարերկրյա ներդրողների համար: Այն նաև նպաստում է տվյալների նույնականացմանը և փոխգործելիությանը պետական այլ գերատեսչությունների կողմից վարվող տվյալների բազաների հետ (ինչպես օրինակ՝ Պետական եկամուտների կոմիտեի և Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տվյալների բազաներ և այլն):

27. Միջազգային փորձը ցույց է տալիս, որ գրեթե բոլոր զարգացած երկրներում բնօրինակ փաստաթղթերի ներկայացման պահանջը վերացել է և անցում է կատարվել էլեկտրոնային, թվային համակարգի:

28. Բնօրինակ փաստաթղթերի պահանջը խոչընդոտում է Գրասենյակի էլեկտրոնային համակարգի զարգացմանը, քանզի էլեկտրոնային համակարգով հայտը ներկայացնելուց հետո հայտատուն ստիպված է կրկին ներկայացնել բնօրինակ փաստաթուղթ: Ինչպես ռեզիդենտ, այնպես էլ ոչ ռեզիդենտ հայտատուների համար դա նաև լրացուցիչ ծախս է ենթադրում:

29. Բացի այդ, գործող օրենսդրությամբ, Գրասենյակի կողմից ապրանքային նշանների որոնումն անցկացվում է քսանօրյա ժամկետում, որը չի համապատասխանում հայտատուների պահանջներին և գրավիչ չէ վերջիններիս համար:

30. Թեև Գրասենյակի կողմից իրականացվող որոշ գործընթացներ թվայնացված են, սակայն դեռ խնդիրներ կան ինչպես տարբեր տեղեկատվական համակարգերի հետ տվյալների համադրման, այնպես էլ լիարժեք թվայնացման հետ կապված,

31. Նախատեսված չեն այլընտրանքային աջակցության և խորհրդատվության մեխանիզմներ փոքր և միջին ձեռնարկությունների կամ հետազոտողների, գիտաշխատողների համար՝ ուղղված գիտական և բիզնես գործընթացներում ՄՍ մշակույթի կարևորմանն ու զարգացմանը:

Զարգացման ուղղությունները

32. Առաջիկա երկու տարվա ընթացքում զարգացման հիմնական ուղղությունը լինելու է՝

1) Գրասենյակի կողմից ՄՍ օբյեկտների փորձաքննության անցկացման, գրանցման հետ կապված գործընթացների ամբողջական և լիարժեք թվայնացումը,
2) ՄՍ պաշտպանության ոլորտի շահագրգիռ կառույցների հետ համագործակցության ակտվիացումն՝ ուղղված առկա խնդիրների համատեղ լուծմանը:

Օրենսդրական բարեփոխումներ

33. ՄՍ համակարգի գործընթացները Հայաստանի Հանրապետությունում ունեն օրենսդրական կարգավորման անհրաժեշտություն:

34. Քաղաքացիական օրենսգրքում ներառված շատ դրույթներ կրկնվում են վերոգրյալ օրենքներում կամ տարբեր մեկնաբանությունների և տարընկալումների պատճառ են դառնում: Օրենքները փոփոխելու դեպքում անհրաժեշտություն է առաջանում փոփոխություններ կատարել նաև Քաղաքացիական օրենսգրքում: Օրենքների ընդհանուր մասերում շատ դրույթներ կրկնվում են: «Մտավոր սեփականություն» և «Մտավոր Սեփականություն իրավունք» եզրույթները տարանջատված չեն և յուրաքանչյուրը հստակ սահմանված չէ:

35. Այս կերպ կնվազեցվեն մի կողմից օրենքների և քաղաքացիական օրենսգրքի կրկնությունները և հետագա ռիսկերը, իսկ մյուս կողմից՝ տարբեր մեկնաբանությունների և տարընկալումների հետ կապված խնդիրները:

36. Ապրանքային նշանների իրավատերերը և այլ անձինք, ում իրավունքները կարող են ոտնահարվել, պետք է ունենան բավարար իրավական հիմքեր իրենց խախտված իրավունքները վերականգնելու համար, իսկ օրենքը պետք է նպաստի նաև նման իրավունքների խախտումների կանխարգելմանը:

Զարգացման ուղղությունները

37. Առաջիկա երկու տարվա ընթացքում զարգացման հիմնական ուղղությունը լինելու է օրենսդրական բարեփոխումների փաթեթի մշակումը՝ հիմնված առկա խնդիրների, օրենսդրական բացթողումների կարգավորման վրա:

Ինստիտուցիոնալ բարեփոխումներ

38. ՄՍ իրավունքների պաշտպանության մակարդակի բարելավումը նվազեցնում է տեխնոլոգիաների նկատմամբ իրավունքների ոտնահարման ռիսկերը, որը նպաստում է գիտահետազոտության ոլորտում օտարերկրյա ներդրումների ներգրավմանը: Հետևաբար, ամենաառաջատար տեխնոլոգիաների փոխանցման (տրանսֆերի)

հավանականությունը մեծանում է ՄՍ իրավունքի պաշտպանության մակարդակի բարելավմամբ:[6]

39. Հայաստանի Հանրապետության ՄՍ համակարգի զարգացման գործում կարևոր նշանակություն ունի նաև ՄՍ պաշտպանություն ապահովող կառույցների՝ իրավապահ, դատական և մաքսային մարմինների գործուն ներգրավվածությունը:

40. Հետազոտությունները վկայում են, որ ՄՍ իրավունքների թույլ պաշտպանությունն ազդում է նաև օտարերկրյա ներդրումների ներգրավման վրա: ՄՍ իրավունքների թույլ պաշտպանություն ապահովող երկրները գրավիչ չեն այն ընկերությունների համար, որոնք ՄՍ իրավունքների պաշտպանության տեսանկյունից ավելի զգայուն են: Քիչ է հավանականությունը, որ նման ընկերությունները լուրջ ներդրումներ կատարեն մի երկրում, որտեղ իրենց ՄՍ իրավունքների պաշտպանությունը ռիսկի տակ է կամ առկա են օրենսդրական և իրավակիրառ պրակտիկային առնչվող անորոշություններ:

41. Հայաստանի Հանրապետության որևէ բարձրագույն ուսումնական հաստատություն չունի մասնագիտացում ՄՍ իրավունքի բնագավառում: Երկրում առկա չէ ՄՍ ոլորտի մագիստրոսական ծրագիր, որի միջոցով հնարավոր կլիներ մասնագիտանալ իրավունքի այս ճյուղում: Իսկ վերապատրաստման ծրագրերը կազմակերպվում և անցկացվում են առանձին մասնագետների կամ կազմակերպությունների կողմից՝ ոչ ինստիտուցիոնալ և ոչ մշտական հիմունքներով:

Զարգացման ուղղությունները

42. Առաջիկա երկու տարվա ընթացքում զարգացման հիմնական ուղղությունները կլինեն՝

[6] Maskus Keith E. (1997), "The Role of Intellectual Property Rights in Encouraging Foreign Direct Investment and Technology Transfer", Prepared for the Conference "Public-Private Initiatives After TRIPS: Designing a Global Agenda" held at Brussels on July 16-19.

1) Գրասենյակում վարչական վարույթների և որոշումների կայացման ընթացակարգերի փոփոխություն, այլընտրանքային համակարգի ստեղծումը (ՄՍ արբիտրաժ),
2) Գրասենյակի գործող առցանց էլեկտրոնային համակարգի արդիականացումը և լիարժեք թվայնացումը,
3) Ֆորմալ կրթական համակարգում ՄՍ առանձին մոդուլի մշակումը և ներդրումը,
4) ՄՍ պահպանության և պաշտպանության համակարգերի մասնագետների որակավորման ինստիտուտի ստեղծումը և զարգացումը,
5) ՄՍ և տեխնոլոգիաների առևտրայնացման համակարգի խթանում:

Իրավագիտակցության բարձրացում

43. ՄՍ ոլորտում Հայաստանի Հանրապետությունում առավել հաճախակի խախտվում են հեղինակային իրավունքները: Սակայն, ի տարբերություն ՄՍ այլ ճյուղերի, որտեղ խախտումները կարող են պայմանավորված լինել, օրինակ, անբարեխիղճ վարքագծով, այլ բրենդների, գյուտերի կամ դիզայնների բարի համբավից օգտվելու և անհիմն օգուտներ ստանալու դրդապատճառներով, հեղինակային իրավունքի ոլորտի խախտումները, որպես կանոն, իրազեկության պակասի հետևանք են:[7]

44. Հայաստանի Հանրապետությունում գործող գրեթե բոլոր ժամանցի վայրերում և մեծ խանութներում հնչում են երաժշտական ստեղծագործություններ: Սակայն քչերն են տեղյակ, որ երաժշտական ստեղծագործությունը հանրության համար այդ եղանակով (հրապարակայնորեն) հասանելի դարձնելը իրենից ներկայացնում է տվյալ ստեղծագործության օգտագործում, որի համար պետք է ունենալ թույլտվություն հեղինակից կամ իրավատիրոջից և վճարել հեղինակային հոնորար այդ ստեղծագործության օգտագործման համար:

[7] Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը և իրավունքների կիրարկումը Հայաստանի Հանրապետությունում, IPRC/BEY (2020թ.)

45. Ծրագրային ապահովումները (համակարգչային ծրագրերը) ևս հեղինակային իրավունքներով պահպանվող օբյեկտներ են և դրանց նկատմամբ իրավունքները ևս խախտվում են Հայաստանի Հանրապետությունում: Սակայն այս ոլորտի խնդիրները տարբերվում են երաժշտական ստեղծագործությունների ոլորտին առնչվող խնդիրներից:

46. Համեմատաբար ավելի լավ է վիճակը ապրանքային նշանների ոլորտում, սակայն նույնիսկ այստեղ դեռևս բազմաթիվ խնդիրներ են առկա՝ հատկապես իրավակիրառ պրակտիկայում: Ապրանքային նշաններն ուղղակիորեն կապված են ապրանքների վաճառքի և ծառայությունների մատուցման այսինքն՝ ձեռնարկատիրական գործունեության հետ: Հաճախ դրանց պաշտպանվածությունից է կախված նաև ձեռնարկությունների եկամուտները: Հետևաբար, ապրանքային նշանների համար իրավատերերն ավելի մեծ շահագրգռվածություն ունեն և ավելի շատ են զբաղվում իրենց իրավունքների պաշտպանությամբ: Դա է նաև պատճառը, որ գնալով ավելի շատ թվով իրավաբաններ են սկսում մասնագիտանալ ապրանքային նշանների ոլորտում և ամենաշատ դատական գործերը հենց այդ ոլորտում են, չնայած նրան, որ Հայաստանի Հանրապետությունում ամենաշատ խախտումները հեղինակային իրավունքի ոլորտում են:

47. Գյուտերի ոլորտում խախտումների թիվն աննշան է, քանզի գյուտերի գրանցման և օգտագործման թիվը ևս շատ քիչ է Հայաստանի Հանրապետությունում:

Զարգացման ուղղությունները

48. Առաջիկա երկու տարվա ընթացքում զարգացման հիմնական ուղղությունները կլինեն՝

1. Հանրության լայն շրջանակների համար իրազեկման միջոցառումների իրականացումը,
2. Ավագ դպրոցականների, ուսանողների, անկախ ոլորտից և զբաղեցրած պաշտոնից մասնագետների համար ոչ ֆորմալ, ինտերակտիվ ուսուցման դասընթացների իրականացումը,
3. Զանգվածային լրատվամիջոցների հետ համագործակցության ակտիվացումը: